ՀՀ ԿԳՄՍՆ «Մարտունու Տ. Աբրահամյանի անվան ավագ դպրոց» ՊՈԱԿ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա- «Սովորողներ մեջ արժեքային համակարգի ձևավորումը , առարկայի դասավանդման ընթացքում»

Դպրոց - Գոմքի միջնակարգ դպրոց

Ուսուցիչ- Անուշ Հակոբյան

Ղեկավար- Օհանեսյան Կիմա

ՎԱՅՔ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ.....5

ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ.....7

ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ....9

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....15

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Երեխան ոչ թե դատարկ սափոր է,

Որը պետք է լցնել,այլ ջահ է,

Որը պետք է վառել;

Մարկոս Ֆաբիոս Քվինթիլիանոս

Ժամանակակից հասարակությունն արմատական փոփոխությունների մի շրջան է անցնում,որն ամիջականորեն ազդում է մատաղ սերնդի մտածելակերպի, հոգեբանության և արժեքային կողմնորոշումների վրա:

ՀՀ սովորողների արժեքային համակարգի ձևավորումը ներառված է հանրակրթական պետական չափորոշչում՝ որպես կրթության բովանդակային բաղադրիչ:

21-րդ դարի սերնդի արժեհամակարգի ձևավորման , կրթության և դաստիարակության գործում ծանրակշիռ դեր ու անելիք ունի տարրական դասարանի դասվարը,որի գերնպատակն է կերտել բարոյական,ազգային արժեքներով օժտված սերունդ:

Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն տարրական դասարաններում ուսումնական գրեթե բոլոր առարկաները: Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը,որի յուրացումը երեխաների մեջ ձևավորում է հայրենասիրություն,սեփական ժողովրդի պատմության , նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում:

Աշխատանքի նպատակը. Վերհանել սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը տարրական դասարանում դասավանդման ընթացքում :

Առարկայի դասավանդման միջոցով աշակերտների մեջ ձևավորել կայուն արժեքային համակարգ:

Թեմայի արդիականությունը. Երեխաների մեջ արժեքային համակարգի ձևավորման համար իր անգնահատելի և մեծ դերը պետք է ունենա դպրոցը, որտեղ երեխան անցկացնում է իր օրվա զգալի մեծ մասը: Այս ուղությամբ դպրոցը և ընտանիքը պետք է համատեղ ուժերով ձևավորեն երեխաների արժեհամակարգը՝ նպատակ ունենալով ստեղծել հասարակությանը պիտանի, բանիմաց, լիարժեք անհատ, ով կմերժի օտար արժեքները, վնասակար սովորույթներն ու բարքերը, միասին կնպաստեն անհատի ձևավորմանը: Ժամանակակից դպրոցը պետք է մշակի ազգային դիմագիծը պահելու իր ծրագրերը և մեխանիզմները, դեռահասին կարողանա դնել ճիշտ ուղու վրա: Սակայն ասել, որ այսօր արժեքային համակարգում տեղի ունեցող փոփոխությունների պատճառը միայն գլոբալացումն ու անցումային շրջանն են, սխալ կլինի: Վերջիններս ուղղակի այն գործոններն են, որոնք ավելի են սրացնում այն բացասական երևույթները, որոնք ազգային մտածողության մեջ են ներթափանցում՝ նորամուծությունների հետ միասին:

ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ

Կրթական տարբեր աստիճաններում սովորողն ունենում է աշխարհի նկատմամբ վերաբերմունքի տարբեր դրսևորումներ և հարաբերություններ: Վերաբերմունքն աշխարհի նկատմամբ և հարաբերությունը աշխարհի հետ, վերաբերմունք սեփական անձի նկատմամբ և հարաբերությունն ինքն իր հետ իրականացվում են հասարակական դաստիարակության համակարգի (ուսումնական հաստատություններ, հասարակական, պետական, խորհրդակցական մարմիններ, մանկապատանեկան կառույցներ, այլ) և տեղեկատվական տեխնոլոգիաների (հեռուստատեսություն, համացանցային լրատվական միջոցներ, մամուլ) միջոցով: Կինոն, թատրոնը, հեռուստատեսությունը, համացանցը ներգործում են սովորողի անձի վրա ոչ միայն ինքնին՝ որպես տեղեկատվության աղբյուրներ, այլ նաև որոշակի տիպարների միջոցով, որոնք դրսևորվում են այդ «տեղեկատվական աղբյուրներից հոսող» հերոսների վարքագծում: Սովորողները, իրենց տարիքային, սեռական և անհատական առանձնահատկություններին համապատասխան, հակված են նույնացնել իրենց այս կամ այն հերոսի հետ՝ յուրացնելով նրանց վարքի ձևերը, ապրելակերպը, հագուստը,կենցաղը, կյանքի ոճը և այլն:

Սովորողի արժեքների ձևավորման վրա ազդող գործոններից են ավանդական միջոցները, այսինքն՝ սովորողի մեջ աշխարհի նկատմամբ վերաբերմունքի և հասարակության հետ հարաբերության, սեփական անձի նկատմամբ վերաբերմունքի ձևավորումը ընտանիքի և սոցիալական միջավայրի միջոցով: [1] Սակայն սովորողների կողմից այդ միջավայրին բնորոշ արժեքների, կանոնների, չափանիշների, հայացքների յուրացումը միշտ չէ, որ համապատասխանում է հասարակության կողմից ընդունված արժեքներին և խրախուսելի չափանիշներին: Ավանդական միջոցների յուրացումը լինում է չգիտակցված՝ վարքի ընդունված կաղապարներն ընդօրինակելու միջոցով: Այս առումով իրավացի է Մ. Մոնտենը.

[1] Թորոսյան Կ., Սարգսյան Վ., Խաչատրյան Հ., Մայրենի 2-4, Ուսուցչի ձեռնարկ, Մակմիլան-Արմենիա, 2007

«…Մենք որքան ասես կարող ենք պնդել մերը, սակայն սովորույթն ու համընդհանուր կանոնները մեզ քարշ են տալիս իրենց ետևից»: Սովորողի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը տարիքայինն է, երբ սովորողի արժեքային կողմնորոշումները, արժեքային նախապատվությունները, վարքն ու բարոյահոգեբանական գծերը դրսևորվում են՝ ըստ տարիքային և կազմաբնախոսական առանձնահատկությունների: Արտաքուստ արժեհամակարգային դաստիարակության առանցքը դրսևորվում է սովորողի վարքի ու շփման հարաբերությունների որոշակի մակարդակում՝ խոսքում, արտաքին տեսքում, ազատ ժամանակն անցկացնելու ձևում, ապրելակերպում և այլն: Տարիքային դաստիարակությանը բնորոշ են հակումը դեպի մշակույթի որոշակի շերտերը, կենցաղին բնորոշ արժեքների որոշակի աստիճանակարգությունը: Սակայն այստեղ ամենակարևորը մանկավարժների կողմից «սովորողների մեջ կյանքի նկատմամբ դրական վերաբերմունքի, ապրած յուրաքանչյուր օրվա համար ուրախության զգացում ապրելու ունակության ձևավորումն է»: Սովորողի անձի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը միջանձնային հարաբերություններն են կամ իրենց համար հեղինակավոր, երևելի մարդկանց հետ շփումները (ծնողներ, ուսուցիչներ, մեծահասակներ, ընկերներ և այլն): Բնական է, որ այդ հեղինակավոր անձինք կարող են լինել նաև սովորողի վրա ներգործող հասարակական այս կամ այն կազմակերպությունների անդամները, դպրոցի տնօրենը, դասղեկը, ուսուցիչը և այլն: Սովորողը նրանցից կարող է ստանալ արժեքների վերաբերյալ ինչպես դրական մոդելներ, այդպես նաև բացասական: Ընդսմին՝ բացասական մոդելները հակում ունեն ձևավորվելու ավելի արագ և անդառնալի բացասական ազդեցություն կարող են ունենալ սովորողի անձի արժեքային ճիշտ դաստիարակության վրա: Հետևաբար արժեքների դաստիարակության այս բնագավառը պահանջում է մանկավարժական խստագույն վերահսկողություն և ըստ հարկի՝ նաև միջամտություն: [2]

[2] Պապիկյան Կ., Սաֆարյան Լ., Սովորողների արժեհամակարգի ձևավորման գործընթացի համալիր բնույթը, ՎՊՀ «Գիտական տեղեկագիր», Ա պրակ, https://vsu.am>grqer>aprak , էջ 359:

ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Սովորողի արժեքների ձևավորման խնդիրները բնականաբար լուծվում են ոչ միայն ընտանիքում, այլ նաև ուսումնական հաստատություններում՝ ուսումնադաստիարակչական գործընթացի միջոցով: Ուսուցման դաստիարակչական ներգործությունը օբյեկտիվ օրինաչափություն է, որովհետև Սովորողների համար ուսուցումը գործունեության հիմնական տեսակն է, դրա համար էլ այն կարևոր դեր է կատարում նրանց անձի ձևավորման գործում: Ուսուցման գործընթացի դաստիարակչական ներգործության հարուստ աղբյուր է բուն գործընթացի բովանդակությունը, որովհետև ընտրելով դաստիարակչական առումով հիմնական գաղափարները, օրենքները և հասկացությունները՝ ուսուցիչը հնարավորություն է ստանում առարկայական ծրագրերի բովանդակության յուրացման միջոցով Սովորողների մեջ սերմանել քաղաքական, իրավական, բարոյական, գեղագիտական, բնապահպանական և այլ գիտելիքներ ու վերաբերմունք: Կրթության բովանդակության հետ միասին ուսուցման մեթոդները ներգործում են Սովորողների ճանաչողական ունակությունների վրա՝ նրանց հնարավորություն տալով ստացած գիտելիքները կյանքում օգտագործելու ըստ նպատակի: Ուսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական, դաստիարակչական կամ արժեքային և ընդհանուր զարգացման խնդիրները: Դրա համար յուրաքանչյուր դասի դաստիարակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե մեկուսացված կամ առանձին մոտեցում, այլ գիտելիքների ու կարողությունների, արժեքային որակների, կամքի, բնավորության, զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում: «Եթե դուք ունակ եք որոշելու երեխայի ունակությունն ու նրա ուժը, դուք պետք է գիտենաք, որ ամենամեծ ուրախությունը՝ դժվարությունների հաղթահարման, նպատակին հասնելու, գաղտնիքի բացահայտման ուրախությունը հաղթանակի բերկրանքն է ու ինքնուրույն դառնալու, տիրելու ու տիրապետելու երջանկությունը»:

Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիարակչական խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները, որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում: Նա առանձնացնում է ընդհանուր դաստիարակչական խնդիրները, որոնք առանձին սովորողների մոտ հաճախակի են դրսևորվում: Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով (անհատական, խմբային, էքսկուրսիա, դասղեկական ժամ, արտադասարանական միջոցառումներ և այլն) առավել արդյունավետ է դարձնում սովորողների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը: Օրինակ՝ խմբային աշխատանքի ժամանակ սովորողները սովորում են ուշադրությամբ վերաբերվել միմյանց, միասին հաղթահարել դժվարությունները, միասին ձեռք բերել հաջողություններ, լսել հակադիր կարծիքներ, ընդօրինակել միմյանց և այլն: Հասակակիցների խմբում սովորողն ավելի ազատ է արտահայտում իր մտքերն ու դատողությունները, գործում է անկաշկանդ, ինչն էլ նպաստում է ուսուցման արդյու-նավետ կազմակերպմանը: Անհատական աշխատանքում դաստիարակվում է սովորողների ինտելեկտուալ պատրաստականությունը դժվարությունները հաղթահարելու գործում, ձևավորվում են համառության, ինքնակազմակերպման և ինքնավերահսկման ընդունակություններ: «Հատկապես դեռահասների առանձնահատուկ զգացմունքայ-նությունը, ինքնասիրությունը, որ հաճախ արտահայտում է նրանց ինքնահաստատման և հասուն երևալու ձգտումը, մանկավարժից պահանջում է անհրաժեշտ նրբանկատություն, հարգանք դեռահասի անձի նկատմամբ»:[3]Արժեհամակարգի ձևավորումը սկսվում է տարրական դպրոցից և գնալով ավելի է կատարելագործվում, ավելի է ամրապնդվում միջին և ավագ դպրոցներում:Արժեքների բուրգի գագաթին գտնվող նվիրական ու մեծագույն արժեքը հայրենասիրությունն է: Արժեքների ձևավորումը սկսվում է վաղ տարիքից՝ նախ ընտանիքում, հետո արդեն դպրոցումէ ելնելով ուսուցանվող առարկաներիս և ուսուցիչ-սովորող-ծնող համագործակցությունից: Հարկ է նշել, որ կոնկրետ

[3] Բաղդասարյան Է., Արժեքային վերակառուցումները ազգային կրթական բարեփոխումների համատեքստում, որպես Արցախյան շարժման ձեռքբերում, ԱրՊՀ, Գիտական ընթերցումներ, 2018(10), https://artsakhlib.am>2018/10, էջ 222: 10

դպրոցում արժեհամակարգի սկզիբը դրվում է հենց առաջին դասարանից՝ լեզվակիր երկրի տառերի ուսուցմամբ:

ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորման ու զարգացման առումով առանձնահատուկ տեղ ու դեր ունի տարրական դպրոցը, քանի որ այնտեղ է երեխան հաղորդակից դառնում հասարակական-գիտական նախնական տեղեկատվությանը և վերջինս առօրյա կյանքում վերամիաստավորելու նախնական փորձ ձեռք բերում: Մասնավորապես՝ մայրենիի ուսուցումը արժեքներին հաղորդակցվելու լավագույն միջոցներից է: Սա նշանակում է, որ մայրենիի ուսուցումը չի ենթադրում և ներառում միայն լեզվական-քերականական նախնական գիտելիքների ուղղակի փոխանցում երեխային, այլ՝ դրանց միջոցով նաև ազգային, հոգևոր ու բարոյական արժեհամակարգին հաղորդակցման ապահովում: [4]

Մայրենիի ուսուցման ժամանակակից հայեցակարգը ներառում է ոչ միայն լեզվական գիտելիքների, այլև դրանց միջոցով ավանդույթների, սովորույթների, ապրելակերպի, հավատալիքների, գաղափարախոսության, աշխարհի մասին (աշխարհայացք) պատկերացման, արժեքային համակարգի և շատ ավելիի յուրացում: Որպես կանոն, ծանոթանալով նոր գիտելիքների՝ երեխաները բացի դրանք ձեռք բերելուց, հաղորդակցվում են նաև ազգային մշակույթին և հոգևոր հարստությանը: Այս հետազոտական աշխատանքի միջոցով փորձում ենք անդրադառնալ սովորողներին հայրենասիրական արժեքի արմատավորմանը՝ ուսումնասիրելով հայրենիքի թեման: Սովորողները ոչ միայն ճանաչում են ազգային հերոսներին, այլ նաև փորձում են բնութագրել նրանց և նմանություններ գտնել, ինչու ոչ նաև փորձում են նմանվել հերոսներին: Նրանք գալիս են այն

[4] Փարեմուզյան Ի., Սովորողների արժեհամակարգի ձևավորումը հանրակրթական ուսումնական հաստատությունում, ՎՊՀ «Գիտական տեղեկագիր», Ա պրակ, https://vsu.am>grqer>aprak:

եզրահանգմանը, որ հերոսներ են ոչ միայն պատերազմի դաշտում այլ նաև այլ ոլորտներում, ինչպիսիք են արվեստը, գիտությունը, արհեստը և սպորտը:

Թեման ամփոփելիս դասարանում կատարվում են խմբակային աշխատանքներ որտեղ խմբերը տարբեր ոլորտներից հերոսների մասին լրացուցիչ տեղեկություններ են բերում դասարան և ներկայացնում մյուներին: Այստեղ կարևոր ենք համարում այն, որ սովորողները ծանոթանում են նաև հերոսների կատարած սխրանքներին, որոնց շնորհիվ էլ նրանք դարձել են ազգային հերոսներ:

4-րդ դասարանում <<Հայաստանի յոթ և բյուր հրաշալիքները>> թեմայի ուսումնասիրության ընթացքում երեխաները ծանոթանում են հայրենի բնությանը, գեղատեսիլ վայրերի պատմամշակութային կոթողներին, ծանոթանում հայ ժողովրդի նշանավոր զավակներին:Աշակերտները բազմաթիվ տեղեկություններ են հավաքում նրանց կյանքի ,ստեղծագործությունների նաև հասարակական-քաղաքական գործունեության մասին:

Քառաբաժան մեթոդով աշակերտները ներկայացրեցին իրենց տեսածը,լսածը,զգացածը և մտածածը ինչպես նաև ինչ կուզենային, որ փոխվեր:

Ի՞նչ տեսար Ի՞նչ լսեցիր	Ի՞նչ զգացիր
Ինչի՞ մասին մտածեցիր	Ի՞նչը կուզենայիր,որ փոխվեր

Մայրենի լեզվի դասավանդումը յուրահատուկ բնույթ ունի հատկապես տարրական դպրոցում: Հայերենի դասընթացը ոչ միայն բուն լեզվական,այլև ճանաչողական արժեք ունեցող գիտելիքների հաղորդման հիմնական միջոց է:Հետևաբար՝ընթերցանության նյութերը սովորողների լեզվաքերականական ու գրական ճաշակի զարգացման հետ միասին պետք է ապահովեն նաև բնության, մարդու և հասարակական կյանքի մասին տվյալ տարիքին ու կրթական մակարդակին համապատասխան գործնական ու մատչելի գիտելիքների ձեռքբերում: Գործնական աշխատանքները նպաստում են խորացնելու կրտսեր դպրոցականների գիտելիքները,զարգացնում նրանց ճանանչողական

ակտիվությունը: Պատկերավոր ասած՝ մեզ շրջապատող աշխարհը ստեղծագործական լաբարատորիա է,որտեղ ընթանում էճանաչողական գործընթացը: Աշակերտների գործնական աշխատանքը մայրենիից մի ոլորտ է, որտեղ շաղկապվում են գիտելիքն ու կարողությունը,տեսությունն ու պրակտ Ինչպես գիտենք՝ ձևավորող գնահատման հիմնական նպատակը ուսուցման և ուսումնառության բարելավումն է, ինչը հնարավոր է սովորողի՝ սեփական կրթության մեջ ակտիվ դերակատարում ունենալու պարագայում: Մասնակիցը լինելով սեփական ուսումնառության պլանավորման, իրականացման և վերլուծության փուլերին՝ սովորողը նպատակային սովորում է սովորել: Գործնական աշխատանքը նպաստում է ,որ աշակերտը կարողանա մտածել կարդացածի շուրջը, առանձնացնել գլխավորը երկրորդականից:Այսինքն ՝տեսական գիտելիքի գործնական կիրառումն է ստեղծագործական մոտեցմամբ: Գործնական աշխատանքի ճիշտ անցկացումը Մայրենի առարկայից կարևոր է նաև այն պատճառով,որ այն ձևավորող գնահատման ձևերից է: Գործնական աշխատանքների ընթացքում պետք է իրականացվեն այնպիսի գործողություններ, ինչպիսիք են գիտելիքների որոնումը,դրանց իմաստավորումը, ամրապնդումը, կարողությունների, հմտությունների զարգացումը, գիտելիքների ընդհանրացումը և համակարգումը: Որպես մանկավարժական երևույթ՝ գործնական աշխատանքը մի կողմից ուսումնական առաջադրանք է, այսինքն՝ այն, ինչ պետք է անի աշակերտը, մյուս կողմից՝ այդ առաջադրանքի կատարման ընթացքում համապատասխան գործունեության՝ հիշողության, մտածողության, ստեղծագործական երևակայության դրսևորման ձև, որն աշակերտներին տալիս է միանգամայն նոր, նախկինում նրան անծանոթ գիտելիքներ, կամ էլ արդեն ունեցած գիտելիքների խորացում:

Աշակերտների մեջ արժեքային համակարգ ձևավորվում է նաև <<Ես և շրջակա աշխարհը>>, <<Ազգային երգ ու պար>>-ի, <<Կերպարվեստ>>ի, <<Տեխնոլոգիա>>-ի, <<Շախմատ>>ի, <<Ֆիզկուլտուրա>>ի և մյուս առարկաների դասաժամերին: Երեխաների մեջ սերմանվում է սեր դեպի ազգային և համաշխարհային երաժշտությունը՝ զարգացնելով նրանց մեջ ճաշակ, մտածելակերպ, վերաբերմունք և այլ հատկանիշներ երգի ժամերին: Խնդիրները լուծելու կարողություն, ճկունություն,

մտածողություն, վերլուծելու ունակություն և այլ արժեքներ ձևավորվում են բնագիտամաթեմատիկական և շախմատ առարկաների դասավանդման ընթացքում: Շատ կարևոր է «տեխնոլոգիա» առարկայի դերը,այն ձևավորում է մշակութային ճաշակ, ճանաչողական կարողունակության, ստեղծագործական միտք, գեղագիտական ճաշակ, համագործակցելու կարողականություն, երևակայական միտք, սեփական մտքերն արտահայտելու կարողունակություն, աշխատասիրություն, գեղագիտական, ժողովրդավարական, սոցիալական, հասարակական, ընտանեկան արժեքներ:

Այն նպատակաուղղվում է երեխաների արժեհամակարգի ձևավորմանը, գեղեցիկը, բարին, մարդկայինը տեսնելու, ընկալելու, գնահատելու, լավն ու վատը, չարն ու բարին տարբերակելու կարողությունների, սիրո, հավատարմության, հայրենասիրության, ազնվության և այլ արժեքներ սերմանելուն :

Սովորողներին հայրենիքի մշակույթին հաղորդակից դարձնելը կրթական գործընթացի բաղկացուցիչ մասն է և վերահսկվում է հետևյալ ուղղություններով՝ սովորողների դաստիարակվածության աստիճանը, դասղեկական աշխատանքի որակը, ծնողների մասնակցությունը դաստիարակության գործընթացին, համադպրոցական միջոցառումների անցկացման որակը, ռազմահայրենասիրական մասսայական աշխատանքներ, լրացուցիչ կրթության կազմակերպում և պարապմունքների որակը, բարոյական և գեղագիտական դաստիարակության կազմակերպում, վերականգնողական աշխատանք մանկավարժորեն բարձիթողի երեխաների հետ: Այսպիսով՝ մայրենիի դասավանդման ընթացքում ուսումնական տարաբնույթ նյութերի նպատակային ուսումնասիրումը, այդ թվում՝ պատմական հուշարձանների ուսումնասիրումը հայերնագիտական թեմաների, ի թիվս այլ թեմաներով ստեղծագործությունների, ուսուցման ժամանակ ոչ միայն համալրում է սովորողների գիտելիքները, զարգացնում է նրանց մտածողությունը, այլև ներարկում է նրանց մեջ սեր հայրենիքի պատմության ու մշակույթի նկատմամբ, բարձրացնում է հայրենասիրական դաստիարակությունը: Պատմական հուշարձանների ուսումնասիրման գործընթացը ուսուցիչը կազմակերպում է որպես արտադասարանական աշխատանք՝ զուգակցելով ուսուցանվող թեմային:

Պատմական հուշարձանների վերաբերյալ ստացած գիտելիքները սովորողները շարունակաբար լրացնում և համալրում են հետազոտական և խմբակային, համագործակցային աշխատանքներով՝ ձեռք բերած գիտելիքները հետագայում կիրառելով նաև կազմակերպվող միջոցառումների ժամանակ: Նմանատիպ աշխատանքները արժեքային համակարգի ձևավորման հիմնաքարերից են:

Այսպիսով, բոլոր ուսումնական առարկաները ճիշտ միջառարկայական կապերի կիրառմամբ, խմբային խաղերի միջոցով, բեմականացումներով, քննարկումներով, սալիկաշարերի պատրաստմամբ, միջոցառումների անցկացմամբ, խաղերի միջոցով, ներկայիս լայն մեթոդաբանական գործիքները կիրառելով կարող են, նորովի և նոր մոտեցմամբ, աշակերտների մեջ սերմանել արժեքային մի ամբողջ համակարգ: Հանրակրթական ուսումնական հաստատությունում աշակերտների մոտ արժեքային համակարգի ձևավորման գործում մեծ է տեխնոլոգիա առարկայի դերը:Տեխնոլոգիան գիտելիքների, հմտությունների, արժեքների և վերաբերմունքի նպատակային կիրառումն է մարդկային կարիքներն ու ցանկությունները բավարարող ապրանքներ կամ համակարգեր ստեղծելու համար: Առարկայի նպատակը ստեղծարար, նորարար,նախաձեռնող, ձեռնարկատիրական մտածողություն, ազգային նկարագիր ունեցող անձի ձևավորումն է, ով արվեստին ու արհեստին հաղորդակցվելու, աշխատանքի պրակտիկ ձևերին և նորագույն տեխնոլոգիաներին տիրապետելու, ռեսուրսներն արդյունավետ տնօրինելու միջոցով ստեղծում է մարդկային կարիքներին ու ցանկություններին համապատասխանող ապրանքներ, ծառայություններ և համակարգեր: Տեխնոլոգիական մի շարք առաջընթացներ կամուրջ են հանդիսանում տարբեր մշակույթների միավորման համար: Մշակույթն է մեզ սովորեցնում ինչպես շփվել ուրիշների հետ, ձևավորելով արժեքներ և էթիկայի կանոններ: Այս ամենից զատ հարկ է նշել, որ հանրակրթության պետական չափորոշիչը սահմանում է աշակերտների մոտ ձևավորել հարգանք դեպի օտար մշակույթը և ավանդույթները, ձևավորել գիտելիքներ օտար ժողովրդի արվեստի և արհեստի ճյուղերից: Տեխնոլոգիա առարկայի դասաժամերին արժեքային համակարգը ձևավորվում է հիմնականում համեմատականներ անցկացնելով: Օտար մշակույթը ուսումնասիրելով ձևավորում

են հարգանք օտար մշակույթի ինչպես նաև սեփական մշակույթի նկատմամբ: Ձևավորում են հոգևոր արժեքներ, գնահատանք վերարժևորում են սեփական ավանդույթները:[5]

Ձեռնարկատիրական կրթությունն ուսումնասիրելով տեխնոլոգիայի դասաժամերին, ձևավորվում է մտածելու կարողություն, համագործակցություն, կոլեկտիվիզմ ինչպես նաև հավատ սեփական ես-ի և գաղափարների հանդեպ: Տեխնոլոգիա առարկան իր մեջ ներառում է արաժեքների մի մեծ փունջ, աշակերտների մեջ սերմանելով մշակութային, բարոյահոգեբանական, գեղագիտական, հոգևոր, ժողովրդավարական ձեռնարկատիրական, սոցիալական, հասարակական ընտանեկան և այլ արժեքներ:[6]

[5] Գյուրջինյան Դ., Հեքեքյան Ն., Մայրենի 3, Էդիթ Պրինտ, Երևան, 2008:

[6] Քյուրքչյան Ա., Տեր-Գրիգորյան Լ., Մայրենի 1, Երևան, 2010

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով սույն հետազոտական աշխատանքը՝ հանգել ենք հետևյալ եզրակացությանը.

Արժեհամակարգի ձևավորումը սովորողների մոտ նպատակ ունի ձևավորել անձ և քաղաքացի, որը պետք է՝

1. Գիտակցի սեփական մշակույթի, լեզվի, պատմության, արվեստի, ազգային այլ արժեքների կարևորությունն ու դերը, լինի դրա կրողը,

2. Հարգի Հայաստանի պետական խորհրդանիշերը, լինի հայրենասեր,

3. Գիտակցի, որ գիտությունը, կրթությունը, արդիական տեխնոլոգիաները մեծագույն արժեքներ են ժամանակակից աշխարհում,

4. Կարևորի բարոյական չափանիշները, քրիստոնեական և համամարդկային արժեքները, լինի ազնիվ, արդարամիտ, օրինապահ և բարեկիրթ,

5. Կարևորի գեղագիտական արժեքները՝ գնահատի գեղեցիկը, բարին ու ճշմարիտը, 6. Գիտակցի իր տեղն ու դերը ընտանիքում, հասարակության մեջ, լինի նախաձեռնող, դրսևորի արժանավայել պահվածք:

Արժեքների հանդեպ ճիշտ վերաբերմքունքը ու դրա կարևորության գիտակցումը արմատավորվում են տարրական դպրոցում, ուստի հարկավոր է մայրենիի դասաժամերը հնարավորինս ճիշտ և արդյունավետ կազմակերպել նաև տարրական դասարաններում՝ դրանք նպատակաուղղելով ինչպես երեխաների գիտելիքների, կարողությունների, ինքնուրույնության, ստեղծագործական մտածողության, այնպես էլ արժեքային համակարգի ձևավորման խնդրի լուծմանը:

Տարրական դասարաններում մայրենիի դասաժամերի հիմնական խնդիրները պետք է բխեն զարգացնող և ձևավորող ուսուցում ապահովելու հայեցակետից: Այսինքն՝ այդ 15 գործընթացը պետք է ուղղվի սովորողների անհատական ու ստեղծագործական հմտությունների զարգացմանը, ինչպես նաև երեխայի

ինքնուրույնությունը, պատասխանատվությունը և անհատականությունը ձևավորելուն:

Առարկայի դասավանդման գործընթացի արդյունավետ կազմակերպման հիմքում ժամանակակից մեթոդներն են, քանի որ դրանք հնարավորություն են ընձեռում սովորողներին ինքնուրույն ձեռք բերել, կառավարել, մշակել, գնահատել, վերլուծել ուսումնասիրվող նյութը և, դրա հիման վրա, ինքնուրույն որոշում կայացնել, աշխատել խմբերով, տեսնել սեփական աշխատանքի արդյունքն ու գնահատել այն, կատարել համատեղ խմբային ու համագործակցային աշխատանք, լինել պատասխանատու և հետևողական այդ աշխատանքի համար, գնահատել ինչպես իրենց, այնպես էլ մյուսների կատարած աշխատանքի արդյունքները, առավել ակտիվորեն ներգրավվել դասապրոցեսում: Վերջիններս էլ նպաստում են ինչպես դասանյութի հեշտ յուրացմանը, ուսուցման գործընթացի արդյունավետ կազմակերպմանն ու իրականացմանը, այնպես էլ սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորմանը:

Արժեքային համակարգի ձևավորման հարցում կարևոր ենք համարում մայրենիի դասավանդման մեթոդների գործադրման նպատակը և ակնկալվող արդյունքը: Ուստի՝ արժեհամակարգի ձևավորման տեսանկյունից՝ որպես նպատակ առանձնացնում ենք ուսուցման մեթոդները, իսկ որպես արդյունք՝ սովորողների ակտիվության բարձրացումը, միջանձնային հարաբերությունների մշակույթի ձևավորումը, ակտիվ և հետաքրքիր ուսուցման գործընթացի ապահովումը, հաղորդակցական կարողությունների ձևավորումն ու զարգացումը, ինքնուրույն գործունեության զարգացումը, ուսումնասիրվող նյութի շրջանակներում բարոյահոգեբանական, ազգային ու համամարդկային արժեքների մասին սովորողների պատկերացումների և գիտելիքների ընդլայնումը, սեփական կենսափորձում դրանք արժևորելու և գործածելու կարողության և հմտության ձևավորումը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Բաղդասարյան Է., Արժեքային վերակառուցումները ազգային կրթական բարեփոխումների համատեքստում, որպես Արցախյան շարժման ձեռքբերում, ԱրՊՀ, Գիտական ընթերցումներ, 2018(10), https://artsakhlib.am>2018/10, էջ 220-225:

2. Գյուրջինյան Դ., Հեքեքյան Ն., Մայրենի 3, Էդիթ Պրինտ, Երևան, 2008:

3. Թորոսյան Կ., Սարգսյան Վ., Խաչատրյան Հ., Մայրենի 2-4, Ուսուցչի ձեռնարկ, Մակմիլան-Արմենիա, 2007:

4. Պապիկյան Կ., Սաֆարյան Լ., Սովորողների արժեհամակարգի ձևավորման գործընթացի համալիր բնույթը, ՎՊՀ «Գիտական տեղեկագիր», Ա պրակ, https://vsu.am>grqer>aprak

5. Փարեմուզյան Ի., Սովորողների արժեհամակարգի ձևավորումը հանրակրթական ուսումնական հաստատությունում, ՎՊՀ «Գիտական տեղեկագիր», Ա պրակ, https://vsu.am>grqer>aprak:

6. Քյուրքչյան Ա., Տեր-Գրիգորյան Լ., Մայրենի 1, Երևան, 2010